



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 97

ՑԵՏԱ՝ ԱՇԽԱՐՀ, ՏԷՐԸ ԿԸ ԹԱԳԱԻՈՐԷ

**Տ**էրը կը թագաւորէ, ցնծա՝, աշխարհ, ուրախացէք, դուք՝ կղզիներ: Թանձր ամպով պարուրուած է ան, բայց իր իշխանութիւնը հաստատուած է արդարութեան եւ իրաւունքի վրայ: Իր առջեւն իր կրակն է որ կ'երթայ, եւ կ'այրէ իր շուրջ գտնուող հակառակորդները: Իր փայլակները աշխարհը կը լուսաւորեն, իսկ երկիրը կը տեսնէ ու կը սարսի: Լեռները մոմի մնան կը հալին Տիրոջ դիմաց, որ Տէրն է ամբողջ աշխարհին: Ամօթով պիտի մնան անոնք՝ որ կուռք կը պաշտեն, ոչնչութիւն եղող կուռքերով կը պարծենան: Դուք՝ ո՛վ Տէրը սիրողներ, ատեցէք չարութիւնը. Տէրը կը պահէ անոնք՝ որոնք իրեն հաւատարիմ են, զանոնք կ'ազատէ ամբարիշտներու ձեռքէն. լոյս կը ծագեցնէ արդարներուն վրայ, ուրախութիւն կու տայ անոնց՝ որոնք սրտով ուղիղ են: Ուրախ եղէք Տիրոջմով, ո՛վ արդարներ, եւ գոհութիւն յայտնեցէք՝ յիշելով անոր սրբութիւնը:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Բրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ



ԵԼԻՅ Ե. ԵՒ Զ. ԳԼՈՒԲԱ



## ՄՈՎՍԷՍ ԵՒ ԱՀԱՐՈՆ ՓԱՐԱԲՈՆԻՆ ԱՌՋԵՒ (5:1-21)

«ԵՍ ԵՄ ՈՐ Է»: «Գնա եւ Իսրայելի ծերերը հաւաքէ եւ ըսէ անոնց. Աստուած այցելութիւն ըրաւ ձեզի»: «Եգիպտոսի թագաւորը պիտի չթողու որ երթաք»: «Ես ձեռքս պիտի երկնցնեմ ու պիտի գարնեմ Եգիպտոսը»: «Ահա քեզի երեք նշաններ»: «Գնա հիմա ու ես՝ քու բերնիդ հետ պիտի ըլլամ եւ քեզի պիտի սորվեցնեմ»: Ահա Աստուած այս բոլորը սկիզբէն փոխանցեց Մովսէսին, որպէսզի Մովսէս երբ իրողութեան առջեւ գրնուի անակնկալի չգայ:

Պարմութիւնը կը շարունակուի: Հերաքրքրական համեմատութիւն մըն է որ այսպէղ կը ներկայացուի: Ընդհանրապէս անցեալի ժամանակահատուածը նկարի առած կը տեսնենք որ հեթանոս ժողովուրդներ իրենք կ'երթային աստուածներու քով պաշտամունք ընծայելու, իսկ Աստուծոյ պարագային Ինք է որ կը հանդիպի իրենց: Ըսելու եղանակ մըն է, ուր ցոյց կը տրուի փարբերութիւնը ճշմարիտ Աստուծոյ եւ կուռքերուն: Ճշմարիտ Աստուծոյ պարագային Ինքն է որ կ'ուզէ մարդոց փրկութիւնը, Ինքն է ընդառաջողը, Ինքն է որ կը փնտրէ մոլորեալ ոչխարը: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Ես եկայ որպէսզի կորսուածը փնտրեմ եւ գրնեմ»: Սա կը նշանակէ, որ Աստուած անբարբեր չէ մարդու վիճակին նկատմամբ, այլ հոգածու, փնտրող: Ինչպէս պիտի ըսէր. «Ես լսեցի ձեր աղաղակը եւ գիտեմ ձեր նեղութիւնը»:

Միւս կողմէ, Փարաւոնը կ'ըսէ. «Եհովան ո՛վ է, որ անոր խօսքին մտիկ ընելով՝ Իսրայելին թուլարբեմ: Եհովան չեմ ճանչնար եւ Իսրայելին ալ չեմ թուլարբեր» (5:2): Ահաւասիկ Աստուծոյ խօսքին հաստատումը, որ Փարաւոն պիտի մերժէ: Անցեալին ծանօթ երեւոյթ էր, թէ հեթանոս ժողովուրդի մտայնութեան մէջ աստուածները տեղական ազդեցութիւն ունէին, ուրեմն Փարաւոն կը կարծէ թէ Եհովան Եգիպտոսի վրայ ազդեցութիւն չի կրնար ունենալ: Իսկ Մովսէսի առաջարկը կը վերագրէ անոնց ծուլութեան, այդ իսկ պարճառով ալ կը խստացնէ աշխարհանքի պայմանները այնքան, որ ժողովուրդին կողմէ ներկայացուցիչներ կ'երթան Փարաւոնին կը մերժուին եւ կը սկսին փրկւնջալ:

Այս արտայայտութեան մէջ կայ նաեւ Փարաւոնին հպարտութիւնը, այն ինչ Աբրահամ հակառակը պիտի ըսէր. «Ես ով եմ հող մը» (Ծննդ 18:27):

## ՄՈՎՍԷՍ ՏԻՐՈՋ ԿՐ ԳԱՆԳԱՏԻ - ԱՍՏՈՒԲԾ ՄՈՎՍԷՍԸ ԿՐ ԿԱՆՉԷ (5:22-6:1-13)

«Ինչո՞ւ այս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեցիր, եւ դուն բնաւ չփրկեցիր քու ժողովուրդդ» (5:22): Այսպէղ ժողովուրդին գանգաւոր Մովսէսին, Մովսէս ալ իր կարգին կը դիմէ Աստուծոյ եւ այս դիմումը կարծէք բողոքի նման: Հակառակ այս գանգաւորին, Տէրը անգամ մը եւս կը յուսադրէ Մովսէսը ըսելով որ փակաին Ան իր գործութիւնը ցոյց չտուաւ Փարաւոնին: «Փարաւոնին ընելիքս հիմա ցոյց պիտի տեսնես»(6:1): Տէրը կը գործէ արդարօրէն, եւ ըստ այնմ կը միջամտէ: Ան անմիջապէս գործի չ'անցնիր, նախ կ'արթօնէ որպէսզի Փարաւոն իր խստութիւնը բանեցնէ, որմէ ետք է որ Աստուած Իր գործութիւնը ցոյց պիտի տայ: Ան անգամ մը եւս կը յիշեցնէ Իր անունը՝ Եհովա, «Ես եմ Եհովան, Ամենակարողը», որ պարզ անուն մը ըլլալէ աւելի ինքնութիւնն իսկ է, որ միշտ ներկայ է, հոն է, պարբաստ է փրկելու: Ան նաեւ կը յիշեցնէ Իր խոստումը թէ՛ այն ժողովուրդը որ թափառական պիտի դառնայ, այդ թափառումը աննպատակ պիտի չըլլայ, պիտի ունենայ վախճանակէտ մը, երթալու եւ ժառանգելու խոստացում երկիրը:

Միւս կողմէ կը յիշեցնէ. «Երկնցած բազուկով ու մեծ դաբաստանով պիտի փրկեմ» (6:6): Երկնցած բազուկը կը խորհրդանշէ օգնութիւն, որ կը նշանակէ Աստուած մնայուն կերպով օգնութեան պիտի հասնի: Իսկ մեծ դաբաստանը կը վերաբերի Եգիպտոսի աստուածներուն, որովհետեւ Աստուծոյ պայքարը ոչ թէ Եգիպտոսի ժողովուրդին դէմ է, այլ գանոնք մոլորեցնող չարի գործիքներուն՝ կուռքերուն: Աստուած մեղաւորը չ'արտեր, այլ՝ մեղքը: Մեծ դաբաստանները նաեւ արտայայտութիւն են, ըսելու համար թէ Եհովան կրնայ դարել բոլոր աստուածները, որոնք խորքին մէջ աստուած չեն, այլ՝ ժամանակաւոր խաբկանքներ, մարդկային մտքին ու երեւակայութեան արտայայտութիւն, հետեւաբար, պայքարը Եգիպտոսի դէմ չէ, այլ՝ հեթանոսութեան: Սա կը նշանակէ թէ ժողովուրդը չէ Աստուծոյ դիրախը, թէեւ անոնք անիրաւութիւն կ'ընեն, սակայն, գանոնք մոլորեցնող փարբն է Աստուծոյ թիրախը (6:6, 12:12):

«Ես ձեզի ինձի ժողովուրդ պիտի ընեմ, ու ձեզի Աստուած պիտի ըլլամ» (6:7): Այս արքայապարտութեամբ Աստուած ցոյց կու տայ անոնց կոչումը, թէ՛ւ անոնք այդ կոչումին գիտակից չեն, որովհետեւ հազիւ պզգիկ նեղութեան մը դիմաց կը սկսին փրփնջալ Աստուծոյ դէմ:

«Անոնք հոգիի նեղութենէն ու գործին ծանրութենէն մտիկ չըրին Մովսէսին» (6:9): Ահաւասիկ կացութիւն մը, որուն կրնանք մտնիլ իւրաքանչիւրս, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ ենք, կարծէք այլեւս ի վիճակի չենք լսելու: Այսպէս պարագան ոչ թէ Մովսէսի լսելն էր, այլ Աստուծոյ խօսքը: Որովհետեւ վերջ ի վերջոյ Մովսէսի խօսքերը, Աստուծոյ խօսքերն էին:

Ի վերջոյ, հեքաքրքրական արքայապարտութիւն մըն է, «Իսրայէլի որդիները իրենց գորքերովը Եգիպտոսէն հանեցէք»: Նախ որ գորքի մասին, երբ ամբողջ ժողովուրդ մը ստրուկ է Եգիպտոսի մէջ ուրկէ գորքը: Բայց արքայապարտութիւնը հետեւեալն է, որ Աստուծոյ ժողովուրդը կը նմանի գորքի, այս պարգային Աստուծոյ գորքն է, որովհետեւ նաեւ այս բառը կապուած է Աստուծոյ անուանումին «Տէր գորութեանց», որ կը նշանակէ Ինքն է Տէրը ամբողջ փիեզերքին, հոգեղէն աշխարհին, ինչպէս նաեւ մարդկութեան, եւ այս պարագային Աստուծոյ ժողովուրդին: Պօղոս Առաքեալի բացատրութեամբ. «Մեր պատերազմը մարմնի ու արեան դէմ չէ, այլ այս խաւար աշխարհի իշխաններուն դէմ: Ասոր համար ալ ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը» (Եփես 6:12-13):

